ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 06.06.2017թ. ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Կ-018-05.06.2017-ՏՀ-011/0 ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	
	Աժ պատգամավոր, տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյան	«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծ	1. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող մայր օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «5) սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը՝ սպառողներին որակյալ ծառայությունների մատուցումը երաշխավորելու համար անհրաժեշտ իրավատնտեսական նախադրյալների ձևավորման և ծառայությունների հիմնավորված սակագների սահմանման միջոցով՝ միաժամանակ ապահովելով ներդրողներին, ռիսկերին համարժեք, ողջամիտ հասույթ ստանալու հնարավորությունը»:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, նշված կետը վերախմբագրվել է:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է

			2. Նախագծի 1-ին հոդվածով առաջարկվող մայր օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունում «հանձնաժողովը դիմում է» բառերը փոխարինել «հանձնաժողովի նախագահը դիմում է» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, համապատասխան փոփոխությունը կատարվել է:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է
			3. Նախագծի 2-րդ հոդվածով առաջարկվող 7.1 հոդվածի 4-րդ մասը «միջև» բառից հետո լրացնել «լիազորությունների և» բառերով:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է, կատարվել է համապատասխան լրացումը:	Առաջարկությունն ամբողջությամբ ընդունվել է